*Հաստատված է*

*ՎՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-16/2 ծածկագրով*

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի*

*2016 թ. <<մարտի >> <<12>>-ի թիվ <<1>>որոշմամբ*

*<<Վանաձորի Պետական Համալսարան>>ՊՈԱԿ*

# Հ Ր Ա Վ Ե Ր

*<<Վանաձորի Պետական Համալսարան>>ՊՈԱԿ*-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ <<ՇԻՆԱՆՅՈՒԹԻ>> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

*Հարգելի մասնակից*

*Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*<<Վանաձորի Պետական Համալսարան>>ՊՈԱԿ*-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ << ՇԻՆԱՆՅՈՒԹԻ >> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՍՈՒՅՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ

## ՄԱՍ I.


1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը

7. Հայտերի բացումը

8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը

9. Պայմանագրի կնքումը

10. Պայմանագրի ապահովումը

11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը

12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

## ՄԱՍ II. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը
4. Հայտի գնային առաջարկը
5. Հայտը պատրաստելու կարգը
6. Հավելվածներ 1-11

<<Վանաձորի Պետական Համալսարան>>ՊՈԱԿ -ն (այսուհետև՝ Պատվիրատու)՝ << *ՇԻՆԱՆՅՈՒԹԻ* >> ձեռքբերման նպատակով կազմակերպել է << ՎՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-16/2 >> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետև՝ ընթացակարգ) և տրամադրում է սույն հրավերը:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցները:

Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Վանաձոր,Տիգրան Մեծի 36 հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող << 7 >> -րդ աշխատանքային օրվա ժամը << 10 >>-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հրավերը փաստաթղթային ձևով ստանալու համար Պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում Պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

*<<Վանաձորի Պետական Համալսարան>>ՊՈԱԿ* էլեկտրոնային փոստի հասցեն է՝gnumner@vsu.am,

հեռախոսահամարն է՝0-322-4-63-87,0-94-007607:

## ՄԱՍ I

## 1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*Գնման առարկա է հանդիսանում* <<Վանաձորի Պետական Համալսարան>>ՊՈԱԿ-ի *կարիքների համար՝* ***<< ՇԻՆԱՆՅՈՒԹԻ >>***

*ձեռքբերումը, որոնք խմբավորված են* ***<<220>>*** *չափաբաժինների՝*

| *Չափաբաժինների համարները* | *Չափաբաժնի անվանումը* |
|---|---|
| 1 | Մետր 1 |
| 2 | Մետր 2 |
| 3 | Մետր 3 |
| 4 | Ավազ |
| 5 | Աղ |
| 6 | *Տաչիլոյի քար 1* |
| 7 | *Տաչիլոյի քար 2* |
| 8 | Ապակի 1 |
| 9 | Ապակի 2 |
| 10 | Խցուկ պոմպերի սալնիկի համար 1 |
| 11 | Խցուկ պոմպերի սալնիկի համար 2 |
| 12 | Խցուկ պոմպերի սալնիկի համար 3 |
| 13 | Խցուկ |
| 14 | Ներսի անկյունային դետալ |
| 15 | Դրսի անկյունային դետալ |
| 16 | Ուղիղ միացնող դետալ |
| 17 | Ճակատային դետալ(заглушка) |
| 18 | Պլաստմասե տարրա (50-70լ) |
| 19 | Էմուլսիա |
| 20 | Սոսինձ սալիկի |

| | |
|---|---|
| 21 | Մոսինձ կաhույքի |
| 22 | Սիլիկոնի սեղմիչ |
| 23 | Պենի սեղմիչ |
| 24 | Էլեկտր. անջատիչ ներսի |
| 25 | Լար hեռախոսի |
| 26 | Էլեկտրական լար 1 |
| 27 | Էլեկտրական լար 2 |
| 28 | Էլեկտրական լար 3 |
| 29 | Թողարկիչ(пускатель) |
| 30 | Ապահովիչ |
| 31 | Մետաղական փափուկ լար 1 |
| 32 | Մետաղական փափուկ լար 2 |
| 33 | Բարձրախոսի մարտկոց |
| 34 | Ժամի մարտկոց |
| 35 | Էլ. Լապտեր սնուցման բլոկով |
| 36 | Լապտեր |
| 37 | Լամպ ցերեկային մեծ |
| 38 | Լամպ ցերեկային փոքր |
| 39 | Լամպ էլեկտրական |
| 40 | Կաhույքի լամպ |
| 41 | էլեկտրական վարդակ դրսի |
| 42 | էկոնոմ լամպ |
| 43 | էկոնոմ լամպ |
| 44 | էկոնոմ լամպ |
| 45 | Լամպ (60Վտ) |
| 46 | Լամպ մոմիկ |
| 47 | Լամպ (կախովի՝ առաստաղի ) |
| 48 | Ավտոմատ անջատիչ |
| 49 | Ավտոմատ անջատիչ |
| 50 | Ավտոմատ անջատիչ |
| 51 | Ավտոմատ անջատիչ (եռաֆազ) |
| 52 | Ավտոմատ անջատիչ (եռաֆազ) |
| 53 | Լուսատու 120սմ |
| 54 | Լուսատու 60սմ |
| 55 | Պլաֆոն ներսի |
| 56 | Դրսի լամպի պաշտպանիչ գունդ |
| 57 | Կոթառ |
| 58 | Երկարացման լար |
| 59 | Երկարացման լար |
| 60 | Երկարացման լար |
| 61 | Էլեկտր. եռաբաշխիչ |
| 62 | Էլեկտրական գայլիկոն(դռել) |
| 63 | Էլ. Տեստեր |
| 64 | Օդափոխիչ |
| 65 | Օդափոխիչ |
| 66 | Բալգարկա |
| 67 | Ինդիկատոր |
| 68 | Մեկուսիչ ժապավեն |
| 69 | Խրոց |
| 70 | Ծորակի միջուկներ |
| 71 | Ծորակի միջուկներ |

| | |
|---|---|
| 72 | Փական ներսի(заглушка) |
| 73 | Փական դրսի(заглушка) |
| 74 | Փական ներսի(заглушка) |
| 75 | Փական դրսի(заглушка) |
| 76 | Ամրակ |
| 77 | Բաքի պոպլովոկ |
| 78 | Զգոն |
| 79 | Մուֆտ |
| 80 | Կոնտրգայկա |
| 81 | Ներդիր |
| 82 | Կլոր սղոց |
| 83 | Դասազանգի էլեկտրոնային սարք |
| 84 | Խողովակի կցամաս (անկյունակ) |
| 85 | Խողովակի կցամաս (մուֆտ) |
| 86 | Մետաղապլաստե խողովակ |
| 87 | Ծխնի եվրոդռան (петли) |
| 88 | Ծորակ  լվացարանի |
| 89 | Ծորակ լվացարանի ցնցուղի հետ |
| 90 | Վենտիլ |
| 91 | Փոխանցիչ |
| 92 | Ջեռուցման մարտկոց չուգունե |
| 93 | Ջեռուցման մարտկոց ալյումինե |
| 94 | Զուգարանակոնք |
| 95 | Լվացարան |
| 96 | Կախովի բաք |
| 97 | Ծորակ թաթիկով |
| 98 | Ծորակ խոհանոցային |
| 99 | Խոհանոցային լվացարան |
| 100 | Սանդուղք կրկնակ |
| 101 | Զուգարանակոնքի կափարիչ |
| 102 | Մանրահատակի լաք |
| 103 | Ներկի լուծիչ |
| 104 | Շպակլովկա |
| 105 | Գիպսոնիտ |
| 106 | Մետաղի սղոց |
| 107 | Մետաղե սղոցի լեզվակ(Полотно) |
| 108 | Սղոց փայտի |
| 109 | Կացին |
| 110 | Դռան փական |
| 111 | Եվրոլուսամուտի փական |
| 112 | Փականի միջուկ |
| 113 | Փականի միջուկ |
| 114 | Փականի միջուկ |
| 115 | Փականի բռնակներ |
| 116 | Միացնող պտուտակ(Մանեկ(բոլտ)) |
| 117 | Միանող պտուտակի գայկա |
| 118 | Անուր /хомут/ |
| 119 | Անուր /хомут/ |
| 120 | Անուր /хомут/ |
| 121 | Անուր /хомут/ |
| 122 | Պտուտակ |

| | |
|---|---|
| 123 | Պտուտակ |
| 124 | Պտուտակ սև |
| 125 | Պտուտակ սև |
| 126 | Պտուտակ սև |
| 127 | Շվեցար դռան |
| 128 | Նասադկա |
| 129 | Խարտոց |
| 130 | Պտուտակահանի հավաքածու |
| 131 | Պտուտակահանի հավաքածու |
| 132 | Մուրճ մեծ |
| 133 | Մուրճ փոքր |
| 134 | Հարթաչափ |
| 135 | Քլունգ |
| 136 | Ուրագ |
| 137 | Մետաղոպլաստ կտրելու մկրատ |
| 138 | Էլեկտրական ռանդայի դանակ |
| 139 | Հարթաշուրթ |
| 140 | Կծաքցան |
| 141 | Փոցխ |
| 142 | Բանալի (ключ) |
| 143 | Բանալի (ключ) |
| 144 | Վեցանիստ բանալիների հավաքածու |
| 145 | Խողովակի բանալի |
| 146 | Խողովակի բանալի |
| 147 | Խողովակի բանալի |
| 148 | Մեխ 1 |
| 149 | Լամինատ |
| 150 | Լամինատ |
| 151 | Հատակի լամինատ |
| 152 | Սպունգ հատակի լամինատի |
| 153 | Հոլովակ մորթով |
| 154 | Հոլովակ մորթով |
| 155 | Հոլովակ մորթով |
| 156 | Լոբզիկի շեղբ |
| 157 | Շտուցեր դրսի պարուրակով |
| 158 | Շտուցեր ներսի պարուրակով |
| 159 | Ռետինե տակդիր |
| 160 | Ռետինե տակդիր |
| 161 | Գարմոշկա |
| 162 | Վրձին |
| 163 | Վրձին |
| 164 | Վրձին |
| 165 | Վրձին |
| 166 | Վրձին |
| 167 | Լատեքսային ներկ |
| 168 | Փչովի ներկ |
| 169 | Ներկ / յուղաներկ/ |
| 170 | Ներկ / յուղաներկ/ |
| 171 | Ներկ / յուղաներկ/ |
| 172 | Ներկ / յուղաներկ/ |
| 173 | Ներկ / յուղաներկ/ |

| | |
|---|---|
| 174 | Ներկ / յուղաներկ/ |
| 175 | Մետաղի ներկ |
| 176 | Ցեմենտ |
| 177 | Կերամոգրանիտ |
| 178 | Ջրի միացման խողովակ |
| 179 | Ջրի միացման խողովակ |
| 180 | Ջրի միացման խողովակ |
| 181 | Ֆեն շինարարական |
| 182 | Մետաղական խողովակ |
| 183 | Մետաղական խողովակ |
| 184 | Մետաղական խողովակ |
| 185 | Մետաղական խողովակ կվադրատ |
| 186 | Մետաղական խողովակ կվադրատ |
| 187 | Մետաղական խողովակ կվադրատ |
| 188 | Մետաղական խողովակ կվադրատ |
| 189 | Ծալքաթիթեղ(Պրոֆնաստիլ) |
| 190 | Թիթեղ մետաղական |
| 191 | Տախտակ |
| 192 | Շերտավարագույրներ 1 |
| 193 | Շերտավարագույրներ 2 |
| 194 | Շերտավարագույրներ 3 |
| 195 | Գորգիկ դռան առջևի |
| 196 | Գորգիկ դռան առջևի |
| 197 | Կարպետ/կավրոլիտ/ |
| 198 | Գիպսակարտոն |
| 199 | Գիպսակարտոն |
| 200 | Պրոֆիլ ՄԴՖ |
| 201 | Մետաղական պրոֆիլ |
| 202 | Ուղորդիչ(направляющие) |
| 203 | Մետաղական պրոֆիլ |
| 204 | Շինափայտ |
| 205 | Բետոնե բլոկ(перегородочные плиты) |
| 206 | Բետոնե սալիկներ |
| 207 | Սահման(Бордюр) |
| 208 | Հանքային բամբակ(стекловат) |
| 209 | Կախիչ |
| 210 | Ջուբիլ |
| 211 | Ալմազի շրջան |
| 212 | Շպատել |
| 213 | Շպատել |
| 214 | Չրփի |
| 215 | Խառնիչ |
| 216 | Թի |
| 217 | Թի ձեռքի անիվներով |
| 218 | Կաֆելի կտրիչ |
| 219 | Ալյուկոբոնդ |
| 220 | Կտրիչ ապակու |

<< ՇԻՆԱՆՑՈՒԹԻ >> տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

## 2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ <<Մասնակցության իրավունքը>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի II մասի 2.2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում մասնակցի՝

- <<Մասնագիտական փորձառություն>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթա-ցակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում շինարարական ապրանքների մատակարարումը[1]:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու

---

[1] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:*

համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը[2]:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Տեխնիկական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.4 ) այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.[3]

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Աշխատանքային ռեսուրսներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.6) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

## 3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

---

[2] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:*

[3] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն պարբերության 1-ին և 2-րդ կետերը հրավերից հանվում են:*

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած Մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում :

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

## 4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ:

***Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար***: Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող <<7>>րդ աշխատանքային օրվա ժամը <<10>>-ն, ք. Վանաձոր,Տիգրան Մեծի 36 հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Անուշ Ծատուրյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ Օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

դ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

ե. իր կողմից հաստատված հայտարարություն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ[4]:

---

[4] *Մասնակիցը սույն կետով նախատեսված հայտարարությունը հայտով ներկայացնում է, եթե առաջարկում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:*

ը. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրը իրականացվելու է գործակալության միջոցով.

թ. համատեղ գործունեության պայմանագիրը, եթե Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

## 5. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու>> կարգի 5.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով <<փոփոխում>> բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև հայտերի բացելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

## 7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

7.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ ծանուցվելու օրվան հաջորդող <<7>>-րդ աշխատանքային օրվա ժամը <<10>>-ին, ք. Վանաձոր,Տիգրան Մեծի 36 հասցեում:

7.2 Հայտերի բացման նիստում՝

1) նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն է հաղորդում գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը:

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը.

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում

կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր Մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս Մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը Մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ Մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե Մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում։

7.2.1 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն։ Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները։

Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն կետում նշված արձանագրությանը։

7.2.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով։ Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են։

7.2.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով։ Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝

ա. գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.2 կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն[5]։ Իսկ ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամանակ Պատվիրատուին պետք է ներկայացվի նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը։

7.2.4 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը։

7.2.5 Հանձնաժողովի, Պատվիրատուի և Մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

---

[5] *Եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը գերազանցում է գնումների բազային միավորի 70-ապատիկը, ապա սույն ենթակետը հրավերից հանվում է։ Ընդ որում, գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը հաշվարկվում է ըստ չափաբաժինների։*

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ Մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ Մասնակցի հայտ։ Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը.

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի։

7.2.6 էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

7.2.7 Պահանջի դեպքում Մասնակցի հայտի, ներառյալ գնային առաջարկի, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը պարունակող փաստաթղթի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած Մասնակցին:

7.3 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը, կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

7.4 Եթե սույն հրավերի 7.3 կետով սահմանված ժամկետում Մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

7.5 Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին[6]:

2) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին.[7]

3) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում ներկայացնել նաև լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային

---

[6] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չի գնահատվում:*

[7] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույքն է, ապա սույն ենթակետը խմբագրվում է՝ նկատի ունենալով, որ առաջին տեղը զբաղեցնող մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր չեն ներկայացվում:*

առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

7.5.1 Պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված Մասնակիցը:

7.5.2 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

2) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

3) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.5.3 Քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

7.6 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը սույն հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասով, որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ Մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը համարվում է հարկային գաղտնիք, բացառությամբ Մասնակցի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների:

7.7 Սույն հրավերի 7.5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական

բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:[8]

7.8 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

## 8. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

8.1 Սույն հրավերի 7.7 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝

8.1.1 հանձնաժողովը գնահատում է սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

8.1.2 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և սույն հրավերի 4.3 կետի <<գ>> ենթակետով նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը[9]:

8.1.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

8.1.5 Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովը ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում են սույն հրավերով նախատեսված պայմանները:

**Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:**

8.2. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն հարվերի ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված պահանջները:Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

8.4 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.5 Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել Մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե Մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

---

[8] *Սույն կետը հրավերից հանվում է, եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը:*

[9] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույք է, ապա սույն կետը խմբագրվում է նկատի ունենալով, որ առաջին տեղը զբաղեցնող մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր չեն ներկայացվում:*

1) տվյալ Մասնակցի հայտը մերժվում է.

2) Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում։

8.6. Սույն հրավերի 8.5 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ։

8.7. Պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են ընթացակարգի արդյունքները։

8.8 Մինչև պայմանագիր կնքելը, Պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին։ Այդ մասին կարող է հայտարարվել՝

1) արդյունքների ամփոփման նիստում՝ հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր մասնակիցները.

2) նման հայտարարությունը էլեկտրոնային ձևով կամ փաքսով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կարող է ուղարկվել գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին.

3) նման հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև Պատվիրատուի ինտերնետային կայքում։

8.9 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և Պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է։

**Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում << 5 >> օրացուցային օր է։ Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր։**

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը։ Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է։

8.10 Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը։ Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները։

8.11 Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը ամփոփման նիստի վերաբերյալ ցանկանում է արտահայտել ամփոփման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն մասի 8.10 կետում նշված արձանագրությանը։

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ Պատվիրատուի կողմից։ Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով։

9.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջը։

Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով։ Ընդ որում պայմանագրի նախագծում ներառվում են ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը։

9.3 Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը Պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Ընդ որում, Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

9.4 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերի 8.9 կետով նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և սույն հրավերի 10.1 կետով նախատեսված ժամկետում Պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի, իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը[10], ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է Մասնակիցը, եթե նա հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

9.5 Մինչև սույն հրավերի 9.4 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

## 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

10.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

10.2 Պայմանագրի կատարման ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի տասը տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով (Հավելված 10):

10.4 Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա պայմանագրի և (կամ) կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին պայմանագրի կատարման ավարտից հետո ոչ ուշ, քան հինգ օրացուցային օրվա ընթացքում:

## 11. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

11.1 Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը[11].

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

11.2. Ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին:

11.3 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում, Պատվիրատուն www.gnumner.am կայքում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

---

[10] *եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար*

[11] *Ընդ որում պետության կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել ՀՀ կառավարության որոշման հիման վրա:*

## 12. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.1.1 Յուրաքանչյուր անձ, ով գտնում է, որ Պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի գործողությունների հետևանքով խախտվել են կամ կարող են խախտվել  գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, իրավունք ունի ահազանգելու գնումների աջակցման կենտրոն ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև կենտրոն) թեժ գծին:

12.1.2 Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման վերաբերյալ կենտրոնի թեժ գծին ահազանգ ստանալու դեպքում՝

1) կենտրոնն ստացված ահազանգի վերաբերյալ կազմում է արձանագրություն, եթե առկա են հետևյալ տեղեկությունները՝

ա. Պատվիրատուի անվանումը,

բ. գնման ընթացակարգի ծածկագիրը կամ առարկան,

գ. գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման առարկան,

դ. ահազանգողի անունը (անվանումը), եթե այն հայտնի է.

2) կենտրոնի պետի հանձնարարականով կենտրոնի պատասխանատու անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հեռախոսակապ է հաստատում տվյալ ընթացակարգի գնումների համակարգողի, իսկ անհնարինության դեպքում՝ Պատվիրատուի ղեկավարի կամ աշխատակազմի ղեկավարի հետ և վերջինիս տեղեկացնում է ստացված ահազանգի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնում է Պատվիրատուի կողմից կենտրոնին ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Կենտրոնն ստացված ահազանգի, ինչպես նաև ներկայացվելիք փաստաթղթերի ցանկի վերաբերյալ սույն ենթակետով նախատեսված ժամկետում ծանուցում է նաև էլեկտրոնային փոստով՝ Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային հասցեի առկայության դեպքում.

3) Պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով սկանավորված տարբերակով կենտրոնին է տրամադրում պահանջված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև ստացված ահազանգի վերաբերյալ Պատվիրատուի գրավոր կարծիքը.

4) եթե Պատվիրատուի կողմից ընդունվում է կատարված խախտումը և վերջինս համաձայնում անմիջապես վերացնել այն, ապա արձանագրված խախտման և դրա վերացման մասին տեղեկատվությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է կենտրոնին.

5) եթե Պատվիրատուն գտնում է, որ ահազանգված խախտումն առկա չէ, ապա՝

ա. մեկ աշխատանքային օրվա ընթացքում կենտրոն է ներկայացնում գրավոր հավաստում խախտման բացակայության մասին, ինչպես նաև՝ տվյալ գնման ընթացակարգին վերաբերող պահանջված  փաստաթղթերի պատճենները,

բ. պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերի պատճեններն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում կենտրոնում հրավիրվում է քննարկում, որին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ կողմերը,

գ. հրավիրված քննարկման վերաբերյալ կազմվում է արձանագրություն,

դ. քննարկման արդյունքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում արձանագրվելու դեպքում, կենտրոնի պետի հանձնարարականով, կենտրոնը բողոքարկման գործընթաց է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում,

ե. կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացվում է գրավոր՝ կենտրոնի պետի կողմից, որում ներառվում են Պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը, բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան, կենտրոնի կողմից

արձանագրված խախտման առարկան և պահանջը, ահազանգող անձի պահանջը (եթե նման պահանջ առկա է), բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները, այլ անհրաժեշտ տեղեկություններ.

6) կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքը քննվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով:

12.2 Գնումների, այդ թվում բողոքարկումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու Պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ դիմում ներկայացնելով՝ <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ին աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Կոմիտասի 54/բ, 115 սենյակ հասցեով,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, Պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները:

12.4 Խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անունը (անվանումը) և հասցեն.

2) Պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը, ընդ որում՝ բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար դրամ, որը պետք է փոխանցվի <<Հայէկոնոմբանկի Արաբկիրի>> մ/ճ, Հ/Հ 163058100971 <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հաշվեհամարին: Լիազոր մարմնի և գնումների աջակցման կենտրոնի կողմից գնումների բողոքարկման խորհրդում բողոքարկման գործընթաց նախաձեռնվելու դեպքում բողոքարկման համար վճար չի կատարվում.

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

12.5 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն սույն մասի 8.9 կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

12.6 Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 48-րդ հոդվածի պահանջներին, ապա գնումների աջակցման կենտրոնը խորհրդի անունից այդ մասին տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու հնգօրյա ժամկետ:

12.7 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, Պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա գտնվելու խորհրդի նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

12.7.1 Բողոքի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներում գնումների բողոքարկման խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացուցիչը:

12.8 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

12.9 Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ Պատվիրատուի, հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ.

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում Պատվիրատուի կամ հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն մասի 8.9 կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը.

3) չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե Պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց Օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. Օրենքի 9-րդ հոդվածի կամ սույն մասի 12.17 կետի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա.

4) եթե, սույն մասի 12.6 կետի պահանջներին հակառակ, հանձնաժողովը բոլոր համապատասխան փաստերը քննելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա շահերը պահանջում են ուժի մեջ թողնել պայմանագիրը, ապա կիրառում է այլընտրանքային պատժամիջոցներ՝

ա. պայմանագրի կատարման սահմանափակումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, և (կամ)

բ. Պատվիրատուի հանդեպ պայմանագրի գնի առավելագույնը 10 տոկոսի չափով տուժանքի կիրառում.

5) բոլոր այն դեպքերում, երբ սույն մասի 3-րդ ենթակետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետադարձ ուժ (քանի որ անհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառում է սույն մասի կետի 4-րդ ենթակետի «ա» մասով նախատեսված պատժամիջոցը.

6) հայտարարելու Պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար.

7) որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

12.10 Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքը բավարարվելու դեպքում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

12.11 Բողոքի բանավոր քննությունը բաց է հանրության համար և բողոքը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

12.12 Ցանկացած անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

12.13 Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն այն կայացնելու օրվանից՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, հրապարակվում է տեղեկագրում և ուղարկվում է Պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին:

12.14 Ցանկացած անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել Պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

12.15 Խորհուրդը կայացնում է բողոքը ներկայացրած անձի պահանջած ժամանակավոր միջոցը կիրառելու մասին որոշում, եթե նման միջոցը պատշաճ և անհրաժեշտ է ակնկալվող վնասը մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար:

12.16 Խորհուրդը հաշվի է առնում ժամանակավոր միջոցի հնարավոր հետևանքները բոլոր այն շահերի, այդ թվում՝ հանրային շահի համար, որոնք կրելու են վնասներ, և կարող է կայացնել նման միջոց չկիրառելու մասին որոշում, եթե դրա բացասական հետևանքները կարող են գերազանցել օգուտը: Ժամանակավոր միջոց չկիրառելու մասին որոշումը չի կարող ազդել նման միջոցի դիմած անձի որևէ այլ հայցի վրա:

12.17 Բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հրավերի 12.15-րդ կամ 12.16-րդ կետերով նախատեսված որոշման ընդունումը Պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:

## ՄԱՍ II

## ՀՐԱՀԱՆԳ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ
ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող` այլ ձևերով` պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը (ներառվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ սույն հրահանգի 3.2 կետում նշված դեպքերի) պետք է կազմված լինեն հայերեն:

Գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում, (եթե նախատեսվում է սույն հրավերով) հայտերը հայերենից բացի կարող են ներկայացվել նաև անգլերեն և (կամ) ռուսերեն:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել հայտ:

Հայտը սույն հրավերով նախատեսված կարգով սույն ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված գնման առարկայի վերաբերյալ առաջարկն է, որը ներկայացվում է ընթացակարգին մասնակցելու դիմումով` (Հավելված 1), որում պարտադիր է նշել Մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը, էլեկտրոնային փոստի հասցեն: 2.2 Մասնակիցները հայտով ներկայացնում են`

2.2.1 <<Մասնակցության իրավունքը>> չափանիշի` սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություն իր իսկ կողմից հաստատված` ստորագրված և կնքված այն մասին, որ Մասնակիցը`

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) ներառված չի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Նշված հայտարարության առաջարկվող ձևը և դրա նկատմամբ առաջադրվող պահանջները ներկայացված են սույն հրավերի N 2 հավելվածում:

Եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է սույն կետով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին: Բացի հայտարարությունից, սույն կետով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապացուցվել է Մասնակցի` գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման դրսևորման փաստը, ապա տվյալ Մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.2.2 Հայտարարություն` մասնագիտական փորձառության մասին

1) (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)` գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի

հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող[12]:

2) Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են սույն հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները հետևյալն են՝ շինարարական ապրանքների մատակարարում:

Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Մասնակցի:

2.2.4 Հայտարարություն (Հավելված N 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2.2.5 Հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.4 ) այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2) եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող[13]:

2.2.6 Հայտարարություն (Հավելված N 3.6) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2.2.7 գնային առաջարկ, որը ներկայացվում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում (Հավելված N 4),

2.2.8 Հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացվում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը (Հավելված N 4.1),

2.2.9 Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու դեպքում՝ հաստատված հայտարարություն դրա վերաբերյալ (Հավելված N 4.2)[14],

2.2.10 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրը իրականացվելու է գործակալության միջոցով.

2.2.11 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)[15]:

---

[12] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:*

[13] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերը հրավերից հանվում են:*

[14] *Մասնակիցը սույն կետով նախատեսված հայտարարությունը հայտով ներկայացնում է, եթե առաջարկում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:*

## 3. ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

3.1 Սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և սույն հրավերի 1-ին մասի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է

ա) առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը.

բ) նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը, ըստ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը[16]:

3.2 Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

3.3 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

## 4. ՀԱՑՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

4.1 Առաջարկվող գինը ապրանքների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

4.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում՝

ա. Մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող Մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն:[17]:

4.3 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով[18]:

---

15 *Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ Մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:*

16 *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:*

17 *Եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը գերազանցում է գնումների բազային միավորի 70-ապատիկը, ապա սույն ենթակետը հրավերից հանվում է: Ընդ որում, գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը հաշվարկվում է ըստ չափաբաժինների:*

## 5. ՀԱՅՏԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտը փաստաթղթային ձևով ներկայացնելու դեպքում Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը, ինչպես նաև սույն հրավերի 2-րդ մասի` հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը /տեղեկությունները/, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց` բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 5 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են <<բնօրինակ>> և <<պատճեն>> բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված` Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ` գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

5.2 Սույն հրահանգի 5.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են`

ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի ծածկագիրը.

գ) <<չբացել մինչև հայտերի բացման նիստը>> բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

5.3 Սույն հրահանգի 5.1 և 5.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

[18] *Սույն կետը սահմանվում է հրավերով, եթե պայմանագրի գինը կայուն է:*

Հավելված 1

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու*

*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

# Դ Ի Մ Ո Ւ Մ

## Շ Ր Ջ Ա Ն Ա Կ Ա Յ Ի Ն Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ր Ե Ր Ի Մ Ի Ջ Ո Ց Ո Վ Գ Ն Ո Ւ Մ Կ Ա Տ Ա Ր Ե Լ Ո Ւ Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ Ի Ն Մ Ա Ս Ն Ա Կ Ց Ե Լ Ո Ւ

________________________________________ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Պատվիրատուի անվանումը>>-ի կողմից <<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի

................................... չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին

չափաբաժնի (չափաբաժինների) համարը

համապատասխան ներկայացնում է հայտը և համաձայն է սույն հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը և դրա հետ կապված՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործողություններն իրականացնելու համար:

___________________________________-ն հայտնում և հավաստում է, որ.

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

1. իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի.

2. հանդիսանում է ...................... ռեզիդենտ,

Երկրի անվանումը

3. իր կողմից հայտով առաջարկվող՝ .................................. չափաբաժնում (չափաբաժիններում) նշված

նշվում է չափաբաժնի համարը

ապրանքը (ապրանքները) հանդիսանում է (են) ...................... արտադրության ապրանք (ապրանքներ):

Երկրի անվանումը

___________________________________-ը հայտնում է, որ ունի <<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված լիցենզիա/ներ/ /պատենը կցվում է/[19]:

________________________________ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ <<Մասնակցի հարկ վճարողի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

---

[19] *Եթե հրավերով լիցենզիայի պահանջ չի սահմանվում, ապա սույն նախադասությունը դիմումից հանվում է:*

հաշվառման համար>>:

________________________________ -ի էլեկտրոնայանին փոստի հասցեն է՝ <<Մասնակցի էլեկտրոնային փոստի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հասցե>>:

________________________________________________ ______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված 2

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու*

*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԻՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

________________________________________-ն հայտնում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ.

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) <<________________________>>-ի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) <<________________________>>-ն ներառված չի գնումների գործընթացին

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) բացակայում է գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

________________________________________ ____________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված 3.1[20]

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու*

*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույնով ________________________________-ն հայտնում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է__________________________________որի ընդհանուր

(համանման (նմանատիպ) պայմանագրի(երի) անվանումը(ները))

արժեքը կազմել է ________________________________________

ՀՀ դրամ և պարտավորվում է սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

*Ընդ որում դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:*

________________________________________ ____________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

[20] *եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն հավելվածը հրավերից հանվում է:*

Հավելված 3.3

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու*

*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով ---------------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և այդ տեխնիկական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված 3.4[21]

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու*

*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով ---------------------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հայտը ներկայացնելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

---

[21] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն հավելվածը հրավերից հանվում է և հրավերով մասնակիցներից պահանջվում է ներկայացնել միայն 3.5 հավելվածը՝ վերջինից հանելով բացատրությունը (footnote):*

_______________________________________________ ______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված 3.5[22]

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու*

*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով ---------------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և այդ ֆինանսական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

_______________________________________ _______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

---

22 *եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է սույն հավելվածը,*

Կ. Տ.

Հավելված 3.6

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու*

*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով ------------------------------------------------------------------------------------ն հայտարարում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ և այդ աշխատանքնային ռեսուրսներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

________________________________________ ____________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված 4

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու*

*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

# Գ Ն Ի   Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված <<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

____________________________________-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ* | Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6=3+4+5* |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | | |
| 2 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> | | | | |
| 3 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> | | | | |
| … | … | | | | |
| … | … | | | | |

**Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:*

________________________________________ _______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված 4.1

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու*

*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ՀՐԱՎԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույնով -------------------------------------------------------------------------------------------------------------------------ն հայտարարում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

*իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ (նշվում է չափաբաժնի համարը) չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագիրը համապատասխանում է (են)* **<<--- ---/--->>** *ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների (ապրանքների) տեխնիկական բնութագրերին:*

Ընդ որում՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ................. պարտավորվում է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված 4.2

<<---ՇՀԱՊՋԲ---/--->> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

<<---ՇՀԱՊՋԲ---/--->> ծածկագրով

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու*

*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույնով -------------------------------------------------------------------------------------------------------------------------------------ն հայտարարում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

*իր կողմից հայտով առաջարկվող՝ (նշվում է չափաբաժնի համարը) չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքը (ապրանքները) հանդիսանում է (են) Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:*

*Ընդ որում ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամանակ Պատվիրատուին պետք է ներկայացվի նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:*

______________________________________ ______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

**Հավելված 5**

**<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով**

**շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի**

**<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով**

***շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու***

***ընթացակարգի գնահատող հանձնաժողովին***

Կից Ձեզ եմ ներկայացնում ______________________________-ի՝ <<---ՇՀԱՊՁԲ---/--->>

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը[23]:

______________________________________________ _____________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

*Հավելված 6*

---

[23] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն նախադասությունը խմբագրվում է՝ նախատեսելով, որ մասնակիցը ներկայացնում է միայն իր կողմից առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:*

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի*

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

# ---------------------------------------------------- ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

# ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

# N <<Պայմանագրի ծածկագիրը>>

ք. Երևան << >> << >> 20 թ.

<________________________________________> -ն, ի դեմս __________________________յանի, որը գործում է << >> հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<_____________________>> -ն, ի դեմս տնօրեն ____________________________յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ________________________________________________________ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ---- օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա` պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ`

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք` Պայմանագրով նախատեսվածի փոխարեն` Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ---- օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է`**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում` նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո` ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ` ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի`**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո` ողջամիտ ժամկետում, այլ անձի` Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք` համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 **Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ ________________ (_______________________________________________) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.1.2 Պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝_______ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան Պայմանագրի գինն է՝ Ապրանքի մնացած մասը կմատակարարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ապրանքի մատակարարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով Պայմանագիրը կլուծվի[24]:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան _____________ 20 թ. :

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

---

[24] *Սույն կետը կարող է նախատեսվել պայմանագրի նախագծով, եթե կիրառելի է:*

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության ________ օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _____օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը[25]:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[26]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

---

[25] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե չի մատակարարվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:*

[26] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու

վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում[27]:

9.7 Եթե Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[28]:

9.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ` Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.12 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[28] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

ԳՆՈՐԴ

---------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

---------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1

<<     >> <<     >> 20  թ. կնքված

N ___________________ *ծածկագրով գնման պայմանագրի*

________________________________________ ՋԵՌՈՒՔԲԵՐՄԱՆ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| հ/հ | Գնման առարկայի անվանում | Տեխնիկական ցուցանիշներ | Չափման միավոր | Քանակը | Մատակարարման ժամանակացույց |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մետր 1 | 3մ,որակյալ | հատ | 4 | Մինչև մայիսի 20 |
| 2 | Մետր 2 | 5մ,որակյալ | հատ | 4 | Մինչև մայիսի 20 |
| 3 | Մետր 3 | 10մ,որակյալ | հատ | 3 | Մինչև մայիսի 20 |
| 4 | Ավազ | Կվարցային/ բետոնի համար/,  70կգ-ոց պարկ | հատ | 15 | Մինչև մայիսի 20 |
| 5 | Աղ | Տեխնիկական, ձյուն մաքրելու | կգ | 100 | Մինչև մայիսի 20 |
| 6 | *Տաչիլոյի քար 1* | Խոշոր(грубый),անցքի տրամագիծը 16մմ | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 7 | *Տաչիլոյի քար 2* | Մանր(тонкий),անցքի տրամագիծը 16մմ | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | Ապակի 1 | 1,5x1.5մ ,2 հատ,3մմ հաստության | քմ | 4.5 | Մինչև մայիսի 20 |
| 9 | Ապակի 2 | 3մմ հաստության,1x1մ վրա կտրատած | քմ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 10 | Խցուկ պոմպերի սալնիկի համար 1 | 6մմ | մ | 8 | Մինչև մայիսի 20 |
| 11 | Խցուկ պոմպերի սալնիկի համար 2 | 8մմ | մ | 8 | Մինչև մայիսի 20 |
| 12 | Խցուկ պոմպերի սալնիկի համար 3 | 10մմ | մ | 8 | Մինչև մայիսի 20 |
| 13 | Խցուկ | Ռետինե 20մմ տրամագծով,կլոր ձող | մ | 8 | Մինչև մայիսի 20 |
| 14 | Ներսի անկյունային դետալ | Բաց գույն(цвет дуб 08), լամինատին համապատասխան, որակյալ | հատ | 60 | Մինչև մայիսի 20 |
| 15 | Դրսի անկյունային դետալ | Բաց գույն(цвет дуб 08), լամինատին համապատասխան, որակյալ | հատ | 60 | Մինչև մայիսի 20 |
| 16 | Ուղիղ միացնող դետալ | Բաց գույն(цвет дуб 08), լամինատին համապատասխան, որակյալ | հատ | 60 | Մինչև մայիսի 20 |
| 17 | Ճակատային դետալ(заглушка) | Բաց գույն(цвет дуб 08), լամինատին համապատասխան, որակյալ | հատ | 60 | Մինչև մայիսի 20 |
| 18 | Պլաստմասե տարրա (50-70լ) | 50-70լ,ջրի մեծ տարրա, կափարիչով | հատ | 7 | Մինչև մայիսի 20 |
| 19 | Էմուլսիա | 1կգ ,շինարարական | հատ | 15 | Մինչև մայիսի 20 |
| 20 | Սոսինձ սալիկի | 25 կգ,Լիտոկոլ K17 կամ համարժեք | հատ | 8 | Մինչև մայիսի 20 |
| 21 | Սոսինձ կահույքի | Երկկոմպոնենտ,200մլ,65գ | հատ | 30 | Մինչև մայիսի 20 |
| 22 | Սիլիկոնի սեղմիչ | Որակյալ,225մմ | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 23 | Պենի սեղմիչ | Որակյալ | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 24 | Էլեկտր. անջատիչ ներսի | MAKEL 250 վտ կամ համարժեք | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 25 | Լար հեռախոսի | Ներքին միացումների համար | գծմ | 50 | Մինչև մայիսի 20 |
| 26 | Էլեկտրական լար 1 | 2.5մմ,մնոգոժիլ պղնձյա,լապշա | մ | 150 | Մինչև մայիսի 20 |
| 27 | Էլեկտրական լար 2 | 1մմ,մնոգոժիլ պղնձյա,լապշա | մ | 35 | Մինչև մայիսի 20 |
| 28 | Էլեկտրական լար 3 | 3մմ,մնոգոժիլ պղնձյա,լապշա | մ | 35 | Մինչև մայիսի 20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 29 | Թողարկիչ(пускатель) | Եռաֆազի, 4-րդ գաբարիտային չափի | հատ | 4 | Մինչև մայիսի 20 |
| 30 | Ապահովիչ | 100Ա,ПН-2 կամ համարժեք | հատ | 6 | Մինչև մայիսի 20 |
| 31 | Մետաղական փափուկ լար 1 | Ф 2մմ | կգ | 3 | Մինչև մայիսի 20 |
| 32 | Մետաղական փափուկ լար 2 | Ф 4մմ | կգ | 3 | Մինչև մայիսի 20 |
| 33 | Բարձրախոսի մարտկոց | 9Վտ,որակյալ | հատ | 5 | Մինչև մայիսի 20 |
| 34 | Ժամի մարտկոց | Ժամի AA 1.5v | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 35 | Էլ. Լապտեր սնուցման բլոկով | RL-5519 կամ համարժեքը, մեծ (фонарик) | հատ | 3 | Մինչև մայիսի 20 |
| 36 | Լապտեր | Միջին չափ,15սմ | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 37 | Լամպ ցերեկային մեծ | 36Վտ,120սմ, ZENIT կամ համարժեք | հատ | 100 | Մինչև մայիսի 20 |
| 38 | Լամպ ցերեկային փոքր | 36Վտ,60սմ, ZENIT կամ համարժեք | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 39 | Լամպ էլեկտրական | 100Վտ ZENIT կամ համարժեք | հատ | 500 | Մինչև մայիսի 20 |
| 40 | Կահույքի լամպ | Starlite dichroic reflector MR16 220v 50W կամ համարժեք | հատ | 3 | Մինչև մայիսի 20 |
| 41 | էլեկտրական վարդակ դրսի | MAKEL 250 վտ կամ համարժեք | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 42 | էկոնոմ լամպ | 40Վտ, ծավալը փոքր,որակյալ | հատ | 30 | Մինչև մայիսի 20 |
| 43 | էկոնոմ լամպ | 40Վտ, ծավալը(գլխիկը երկար) մեծ,որակյալ | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 44 | էկոնոմ լամպ | 100Վտ/ ծավալը(գլխիկը կարճ) փոքր/ | հատ | 8 | Մինչև մայիսի 20 |
| 45 | Լամպ (60Վտ) | Մեծ խնձորակով / 60 վտ/ | հատ | 40 | Մինչև մայիսի 20 |
| 46 | Լամպ մոմիկ | Փոքր խնձորակով/ 40 վտ/ | հատ | 30 | Մինչև մայիսի 20 |
| 47 | Լամպ (կախովի՝ առաստաղի ) | Միջին չափի | հատ | 40 | Մինչև մայիսի 20 |
| 48 | Ավտոմատ անջատիչ | 20Ա | հատ | 4 | Մինչև մայիսի 20 |
| 49 | Ավտոմատ անջատիչ | 40Ա | հատ | 5 | Մինչև մայիսի 20 |
| 50 | Ավտոմատ անջատիչ | 63Ա | հատ | 4 | Մինչև մայիսի 20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 51 | Ավտոմատ անջատիչ (եռաֆազ) | 100Ա | հատ | 5 | Մինչև մայիսի 20 |
| 52 | Ավտոմատ անջատիչ (եռաֆազ) | 100Ա,հին սիստեմի ավտոմատ | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 53 | Լուսատու 120սմ | Կոմպլեկտ(светильники потолочные люминесцентные) | հատ | 15 | Մինչև մայիսի 20 |
| 54 | Լուսատու 60սմ | Կոմպլեկտ(светильники потолочные люминесцентные) | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 55 | Պլաֆոն ներսի | 25սմ տրամ.2.5սմ խորութ., | հատ | 8 | Մինչև մայիսի 20 |
| 56 | Դրսի լամպի պաշտպանիչ գունդ | Որակյալ (плафон),ձգովի, Փ-7,8սմ | հատ | 8 | Մինչև մայիսի 20 |
| 57 | Կոթառ | Պարուրակով-ռեզբայով մեծ,(патрон) | հատ | 25 | Մինչև մայիսի 20 |
| 58 | Երկարացման լար | 3մ | հատ | 5 | Մինչև մայիսի 20 |
| 59 | Երկարացման լար | 5մ | հատ | 5 | Մինչև մայիսի 20 |
| 60 | Երկարացման լար | 5-6տեղանոց,10մ երկարութ. | հատ | 3 | Մինչև մայիսի 20 |
| 61 | Էլեկտր. եռաբաշխիչ | 3-ը 2 դարձնող makel կամ համարժեք | հատ | 5 | Մինչև մայիսի 20 |
| 62 | Էլեկտրական գայլիկոն(դրել) | 280W,RTR MAX RTM153 | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 63 | Էլ. Տեստեր | Սլաքով,որակյալ էլեկտրական տեստեր | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 64 | Օդափոխիչ | Տր.-100մմ,Venis կամ համարժեք | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 65 | Օդափոխիչ | Տր.-150մմ,Venis կամ համարժեք | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 66 | Բալգարկա | Փոքր ,BOSH կամ համարժեք, 11000 պտ/ր,D=115,800վտ | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 67 | Ինդիկատոր | Հոսանքի ցուցիչ,պլաստիկից, ունի 3 ռեժիմ ՝ «0»-կոնտակտային ռեժիմ, «L»-ոչ կոնտակտային ռեժիմ ցածր զգայունության,«H» - ոչ կոնտակտային ռեժիմ բարձր զգայունության | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 68 | Մեկուսիչ ժապավեն | Մեկուսիչ ժապավեն, 19մմx20մx0,18մմ, | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 69 | Խրոց | (вилка электрическая),makel կամ համարժեք | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 70 | Ծորակի միջուկներ | Ֆռովի ծորակների համար, (полдюйм), <<шпиндель вентиля>> | հատ | 5 | Մինչև մայիսի 20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 71 | Ծորակի միջուկներ | Թաթիկով ծորակների համար, (полдюйм), <<шпиндель вентиля>> | հատ | 5 | Մինչև մայիսի 20 |
| 72 | Փական ներսի(заглушка) | Ф 15 մմ, ներսի,1/2 | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 73 | Փական դրսի(заглушка) | Ф 15 մմ, դրսի,1/2 | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 74 | Փական ներսի(заглушка) | Ф 20 մմ, ներսի,3/4 | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 75 | Փական դրսի(заглушка) | Ф 20 մմ, դրսի,3/4 | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 76 | Ամրակ | Զուգարանակոնքին տեղադրվող կափարիչի ամրակներ, պլաստմասե | զույգ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 77 | Բաքի պոպլովոկ | Զուքարանակոնքի բաքի պոպլովոկ,շառավոյով | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 78 | Զգոն | 3/4,մի ծայրը երգար մյուսը կարժ ռեզբայով | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 79 | Մուֆտ | 3/4,չուգունե մուֆտ | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 80 | Կոնտրգայկա | 3/4,նեղլիկ գայկա | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 81 | Ներդիր | Զուգարանակոնքի և բաքի շփման ներդիր / прокладка/ | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 82 | Կլոր սղոց | Հաստոցի համար,32x320x2 մմ, Z= 36,կարծր համաձուլվածք | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 83 | Դասազանգի էլեկտրոնային սարք | 220Վ,150մմ տրամագիծ | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 84 | Խողովակի կցամաս (անկյունակ) | Դուհմանոցի համար,90 աստիճան | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 85 | Խողովակի կցամաս (մուֆտ) | Դուհմանոց | հատ | 5 | Մինչև մայիսի 20 |
| 86 | Մետաղապլաստե խողովակ | Դուհմանոց | մ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 87 | Ծխնի եվրոդռան (петли) | Որակյալ,9.3սմ | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 88 | Ծորակ լվացարանի | Ф 15 մմ մեկ տեղանոց, նիկելապատված, Morena կամ համարժեք | հատ | 15 | Մինչև մայիսի 20 |
| 89 | Ծորակ լվացարանի ցնցուղի հետ | Լոգարանի համար,Morena կամ համարժեք | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 90 | Վենտիլ | 3/4,որակյալ,բրոնզե, VENUS կամ համարժեք | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 91 | Փոխանցիչ | 15 մմ երկկողմանի դրսի պարուրակով | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 92 | Ջեռուցման մարտկոց չուգունե | Մեկ հատը 7 հատանոց սեկցիա | հատ | 7 | Մինչև մայիսի 20 |
| 93 | Ջեռուցման մարտկոց ալյումինե | ROYAL ֆիրմայի իտալական 5 շերտանի ջեռուցման մարտկոցներ կամ համարժեք | հատ | 50 | Մինչև մայիսի 20 |
| 94 | Զուգարանակոնք | Ունիտազ ջրամանով և կափարիչով,Victoria կամ համարժեք | հատ | 4 | Մինչև մայիսի 20 |
| 95 | Լվացարան | 55սմ,նուրբ կորացված եզրերով,Imex կամ համարժեք | հատ | 3 | Մինչև մայիսի 20 |
| 96 | Կախովի բաք | 10լ,զուգարանի կախովի բաք | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 97 | Ծորակ թաթիկով | Տաք և սառը ջրի,որակյալ | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 98 | Ծորակ խոհանոցային | Խառնիչային,Խոհանոցային լվացարանի ծորակ, նյութը՝ լատուն, ծածկույթը՝ քրոմ, | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 99 | Խոհանոցային լվացարան | Մեկտեղանոց լվացարան, ունի չորանոց, արտադրված է բարձր որակի չժանգոտվող պողպատից, խորությունը 16սմ, հաստությունը 0.6մմ, | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 100 | Սանդուղք կրկնակ | 2մ-ոց,կառուցվածքը խողովակով կլոր,ծալովի աստիճան | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 101 | Զուգարանակոնքի կափարիչ | Սպիտակ,պլաստմասե,որակյալ | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 102 | Մանրահատակի լաք | 3.8կգ,փայլուն Betek կամ համարժեք | հատ | 45 | Մինչև մայիսի 20 |
| 103 | Ներկի լուծիչ | 0.5լ, CROWN Chemical կամ համարժեք | հատ | 30 | Մինչև մայիսի 20 |
| 104 | Շպակլովկա | 25կգ,ծեփամածիկ գիպսովիյ | հատ | 8 | Մինչև մայիսի 20 |
| 105 | Գիպսոնիտ | Շեն կամ համարժեք,30կգ | հատ | 5 | Մինչև մայիսի 20 |
| 106 | Մետաղի սղոց | Մետաղի սղոց 300 մմ | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 107 | Մետաղե սղոցի լեզվակ(Полотно) | Մետաղի սղոցի 300 մմ -ին համարժեք չափի | հատ | 50 | Մինչև մայիսի 20 |
| 108 | Սղոց փայտի | 500մմ,որակյալ | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 109 | Կացին | Մեծ,1500գ | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 110 | Դռան փական | FIYALTI բարձրորակ կամ համարժեք | հատ | 30 | Մինչև մայիսի 20 |
| 111 | Եվրոլուսամուտի փական | Ռուչկի մեջինը՝ երկարությամբ, մոտ դռան երկ. չափի | հատ | 15 | Մինչև մայիսի 20 |
| 112 | Փականի միջուկ | h =35 մմ 7սմ FIYALTI կամ համարժեք | հատ | 30 | Մինչև մայիսի 20 |
| 113 | Փականի միջուկ | h =35 մմ 9սմ FIYALTI կամ համարժեք | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 114 | Փականի միջուկ | h =35 մմ 10 սմ FIYALTI կամ համարժեք | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 115 | Փականի բռնակներ | Առանց փականի | զույգ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 116 | Միացնող պտուտակ(Մանեկ(բոլտ)) | Գլխիկը կլոր,պտուտակահանի համար նախատեսված կտրվածքով,6սմ երկ, տրամ-6սմ | հատ | 200 | Մինչև մայիսի 20 |
| 117 | Միացնող պտուտակի գայկա | 6սմ-անոց մանեկի համար,երկ 1սմ,նստարանների համար,8մմ մտնում է նստարանի մեջ,2մմ մնում է դրսում | հատ | 200 | Մինչև մայիսի 20 |
| 118 | Անուր /хомут/ | Կապրոնե ամրակալ,մեխով, լարերը սեղաններին կամ պատերին ամրացնելու համար,համար 1 | հատ | 50 | Մինչև մայիսի 20 |
| 119 | Անուր /хомут/ | Կապրոնե ամրակալ,մեխով, լարերը սեղաններին կամ պատերին ամրացնելու համար,համար 2 | հատ | 50 | Մինչև մայիսի 20 |
| 120 | Անուր /хомут/ | Կապրոնե ամրակալ,մեխով, լարերը սեղաններին կամ պատերին ամրացնելու համար,համար 3 | հատ | 500 | Մինչև մայիսի 20 |
| 121 | Անուր /хомут/ | Կապրոնե ամրակալ,մեխով, լարերը սեղաններին կամ պատերին ամրացնելու համար,համար 4 | հատ | 50 | Մինչև մայիսի 20 |
| 122 | Պտուտակ | 4*20 | հատ | 1000 | Մինչև մայիսի 20 |
| 123 | Պտուտակ | 4*30 | հատ | 1000 | Մինչև մայիսի 20 |
| 124 | Պտուտակ սև | Գիպսակարտոնի համար,6x40 մմ | հատ | 2000 | Մինչև մայիսի 20 |
| 125 | Պտուտակ սև | 2,4;գիպսակարտոնի պրոֆիլների համար | հատ | 2000 | Մինչև մայիսի 20 |
| 126 | Պտուտակ սև | 1,3;գիպսակարտոնի պրոֆիլների համար | հատ | 2000 | Մինչև մայիսի 20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 127 | Շվեցար դռան | Միջին չափի,60կգ-անաոց դռների համար,180$^{0}$ բացվածք,կորեական, King կամ համարժեք | հատ | 5 | Մինչև մայիսի 20 |
| 128 | Նասադկա | (Бита) տարբեր տեսակի | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 129 | Խարտոց | Քառակուսի,տափակ,եռանկյունաձև,24-26սմ, | հատ | 5 | Մինչև մայիսի 20 |
| 130 | Պտուտակահանի հավաքածու | Տուփում 6 հատ,տարբեր չափեր | տուփ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 131 | Պտուտակահանի հավաքածու | Տուփում 2 հատ,մեծ չափի,երկար,30-35սմ | տուփ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 132 | Մուրճ մեծ | 1.5կգ | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 133 | Մուրճ փոքր | 800գ | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 134 | Հարթաչափ | 90սմ | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 135 | Քլունգ | Փայտե ձողով,1500գ | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 136 | Ուրագ | Փայտե ձողով,1500գ | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 137 | Մետաղոպլաստ կտրելու մկրատ | 42մմ բերանի բացվածքը | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 138 | Էլեկտրական ռանդայի դանակ | Մակիտա մակնիշի / 82մմ МКР 080/cutting widt-204մմ,cutting deph-0-2մմ,լայն մոտ-1.1սմ | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 139 | Հարթաշուրթ | 180մմ(плоскогубцы),Orient կամ համարժեք | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 140 | Կծաքցան | N6(кусачка),Orinet sky կամ համարժեք | հատ | 3 | Մինչև մայիսի 20 |
| 141 | Փոցխ | Փոցխ փայտե երգար-(ստանդարտ) բռնակով | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 142 | Բանալի (ключ) | Կոմբինացիոն բանալիների հավաքածու 8-19մմ,չուխոլում 12 հատ,մի ծայրը ուղիղ մյուսը կլոր | կոմպլ. | 2 | Մինչև մայիսի 20 |
| 143 | Բանալի (ключ) | Բանալիների հավաքածու,ուղիղ ծայրերով,8 հատ կոմպլեկտում, 15-22մմ | կոմպլ. | 2 | Մինչև մայիսի 20 |
| 144 | Վեցանիստ բանալիների հավաքածու | 2-10մմ չափերի | կոմպլ. | 2 | Մինչև մայիսի 20 |
| 145 | Խողովակի բանալի | Orient կամ համարժեք,համար 1 | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 146 | Խողովակի բանալի | Orient կամ համարժեք,համար 2 | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 147 | Խողովակի բանալի | Orient կամ համարժեք,համար 3 | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 148 | Մեխ 1 | Ապակու,1.5սմ | կգ | 3 | Մինչև մայիսի 20 |
| 149 | Լամինատ | 18մմ,բաց կարիչնիվի,183x366 սմ | հատ | 4 | Մինչև մայիսի 20 |
| 150 | Լամինատ | Կապույտ,բաց կապույտ գրատախտակի համար.183x366 սմ | հատ | 4 | Մինչև մայիսի 20 |
| 151 | Հատակի լամինատ | Բաց գույնի(цвет дуб 08)կամ նմանատիպ բաց գույն, ,բարձր որակի, խոնավադիմացկուն, FLURING կամ համարժեք | մ² | 200 | Մինչև մայիսի 20 |
| 152 | Սպունգ հատակի լամինատի | Բարձր որակի | մ² | 200 | Մինչև մայիսի 20 |
| 153 | Հղկվակ մորթով | 10սմ, BONDIT կամ համարժեք | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 154 | Հղկվակ մորթով | 20սմ, BONDIT կամ համարժեք | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 155 | Հղկվակ մորթով | 25սմ, BONDIT կամ համարժեք | հատ | 13 | Մինչև մայիսի 20 |
| 156 | Լոբզիկի շեղբ | Տուփում 5 հատ,88մմ HSS | տուփ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 157 | Շտուցեր դրսի պարուրակով | 1/2,15 մմ դրսի պարուրակով բրոնզե | հատ | 15 | Մինչև մայիսի 20 |
| 158 | Շտուցեր ներսի պարուրակով | 1/2,15 մմ ներսի պարուրակով բրոնզե | հատ | 15 | Մինչև մայիսի 20 |
| 159 | Ռետինե տակդիր | Ջրի ծորակի  փականների ներսի համար 15մմ,1/2 | հատ | 30 | Մինչև մայիսի 20 |
| 160 | Ռետինե տակդիր | Ջրի ծորակի  փականների տակ դնելու համար 20մմ,3/4 | հատ | 30 | Մինչև մայիսի 20 |
| 161 | Գարմոշկա | Զուգարանակոնքի,որակյալ | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 162 | Վրձին | 4սմ,որակյալ | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 163 | Վրձին | 6սմ,որակյալ | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 164 | Վրձին | 3սմ.որակյալ | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 165 | Վրձին | 10սմ,որակյալ | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 166 | Վրձին | Լայն,70*170,որակյալ | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 167 | Լատեքսային ներկ | Shen կամ համարժեք,15լ | հատ | 25 | Մինչև մայիսի 20 |
| 168 | Փչովի ներկ | Սև, ABRO ,226գ կամ համարժեք | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 169 | Ներկ / յուղաներկ/ | Ծխախոտի գույն,4կգ | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 170 | Ներկ / յուղաներկ/ | 4 կգ սպիտակ , SHEN  Concern կամ համարժեք | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 171 | Ներկ / յուղաներկ/ | 4 կգ բաց կապույտ , SHEN  Concern կամ համարժեք | հատ | 3 | Մինչև մայիսի 20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 172 | Ներկ /յուղաներկ/ | 4 կգ կարմիր , SHEN Concern կամ համարժեք | հատ | 3 | Մինչև մայիսի 20 |
| 173 | Ներկ /յուղաներկ/ | 4 կգ , կանաչ SHEN Concern կամ համարժեք | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 174 | Ներկ /յուղաներկ/ | 4 կգ դեղին, SHEN Concern կամ համարժեք | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 175 | Մետաղի ներկ | Կարիչնիվի,գրունտ , 5 կգ CROWN կամ համարժեք | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 176 | Ցեմենտ | Ցեմենտ Մ400, Հրազդան կամ համարժեք | կգ | 600 | Մինչև մայիսի 20 |
| 177 | Կերամոգրանիտ | 50x50սմ,Մոխրագույն (серый), որակյալ, հատակի համար(ոչ սայթաքուն, մատվի) | մ² | 80 | Մինչև մայիսի 20 |
| 178 | Ջրի միացման խողովակ | 45 սմ երկարության,մի կողմը կցորդիչով, լվացարանի և բաքի համար, VENUS կամ համարժեք | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 179 | Ջրի միացման խողովակ | 45 սմ երկարության, երկու կողմը հեղյուսով լվացարանի , VENUS կամ համարժեք | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 180 | Ջրի միացման խողովակ | 65 սմ երկարության ,երկու կողմը հեղյուսով լվացարանի , VENUS կամ համարժեք | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 181 | Ֆեն շինարարական | Քաշ՝ 0.9 կգ<br>Օդի սպառում՝ 13-19 լ/րոպե<br>Ջերմաստիճան՝ 300-500 ◦<br>Հզորություն՝ 2000 Վտ,Զենիտ կամ համարժեք | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 182 | Մետաղական խողովակ | Ф 15 մմ | մ | 12 | Մինչև մայիսի 20 |
| 183 | Մետաղական խողովակ | Ф 20մմ | մ | 12 | Մինչև մայիսի 20 |
| 184 | Մետաղական խողովակ | 100-ng | մ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 185 | Մետաղական խողովակ կվադրատ | 50x50մմ,պատերը 2մմ, | մ | 120 | Մինչև մայիսի 20 |
| 186 | Մետաղական խողովակ կվադրատ | 30x20մմ,պատերը 2մմ, | մ | 230 | Մինչև մայիսի 20 |
| 187 | Մետաղական խողովակ կվադրատ | 30x50մմ,պատերը 2մմ | մ | 100 | Մինչև մայիսի 20 |
| 188 | Մետաղական խողովակ կվադրատ | 20x40մմ,պատերը 2մմ | մ | 100 | Մինչև մայիսի 20 |
| 189 | Ծալքաթիթեղ(Պրոֆնաստիլ) | Գունավոր ծալքաթիթեղ ԿՊ 35 0,5 հաստությամբ: Ընդհանուր լայնությունը 1090մմ, օգտակար լայնությունը՝ 990մմ:երկ 2500մմ,վիշնյովի | մ² | 100 | Մինչև մայիսի 20 |
| 190 | Թիթեղ մետաղական | 1,5մմ հաստությամբ,հարթ մետաղական թիթեղ,ցինկապատ | մ² | 20 | Մինչև մայիսի 20 |
| 191 | Տախտակ | 4սմ հաստությամբ, | մ³ | 0,5 | Մինչև մայիսի 20 |
| 192 | Շերտավարագույրներ 1 | 120սմ լայն. X 200 բարձ. | հատ | 5 | Մինչև մայիսի 20 |
| 193 | Շերտավարագույրներ 2 | 150սմ լայն. X 260սմ բարձ. | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 194 | Շերտավարագույրներ 3 | 200x200սմ | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 195 | Գորգիկ դռան առջևի | Երեսի շերտը թաղիքից, հակառակ շերտը (տակը) ռետինից | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 196 | Գորգիկ դռան առջևի | Welcome,50 x 70 սմ, | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 197 | Կարպետ/կավր ոլիտ/ | Շագանակագույն,հաստ,որակյալ | մ$^2$ | 50 | Մինչև մայիսի 20 |
| 198 | Գիպսակարտոն | 120x250 սմ,0.9-1 սմ հաստ. | հատ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 199 | Գիպսակարտոն | 120x250 սմ,0.9-1 սմ հաստ.,խոնավադիմացկուն,կանաչ | հատ | 34 | Մինչև մայիսի 20 |
| 200 | Պրոֆիլ ՄԴՖ | 2.8մ երկ.,5,5սմ լայն.,2,5սմ բարձ,անցքը 1սմ | հատ | 15 | Մինչև մայիսի 20 |
| 201 | Մետաղական պրոֆիլ | 1հատը 4 մ,գիպսակարտոնի համար,4,7սմ | հատ | 50 | Մինչև մայիսի 20 |
| 202 | Ուղորդիչ(направляющие) | 1հատը 4 մ,գիպսակարտոնի համար,2,1սմ | հատ | 30 | Մինչև մայիսի 20 |
| 203 | Մետաղական պրոֆիլ | 1հատը 30սմ,գիպսակարտոնի համար | հատ | 100 | Մինչև մայիսի 20 |
| 204 | Շինափայտ | Բրուս,1,5 մետրանոց,5x5սմ | մ | 60 | Մինչև մայիսի 20 |
| 205 | Բետոնե բլոկ(перегородочные плиты) | 40x20x10սմ չափի,անցքերը կլոր | մ$^2$ | 100 | Մինչև մայիսի 20 |
| 206 | Բետոնե սալիկներ | Բռուշատկա աստղանման | մ$^2$ | 60 | Մինչև մայիսի 20 |
| 207 | Սահման(Бордюр) | 22սմ բարձրություն,6սմ հաստություն,50սմ երկարություն | մ | 10 | Մինչև մայիսի 20 |
| 208 | Հանքային բամբակ(стекловат) | Մի կողմը փայլաթիթեղ(ֆոլգա),մեկ ռուլոնը 12մ$^2$,հաստ.՝ 5սմ | ռուլոն | 2 | Մինչև մայիսի 20 |
| 209 | Կախիչ | 2 հատանոց,պտուտակով ամրացվող(շուրուպով) | հատ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 210 | Զուբիլ | Տուփում 5 հատ,6-25մմ լայն,20-30սմ երկարություն | տուփ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 211 | Ալմազի շրջան | Բալգարկի ալմազե շրջան,կաֆել կտրելու համար,115x2.5x22.23 | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |
| 212 | Շպատել | Մեծ 200մմ | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 213 | Շպատել | Փոքր 100մմ | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 214 | Չրփի | 200գ,սպիտակ | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 215 | Խառնիչ | Շինարարական խառնիչի ոտիկը,Միայն խառնիչը,խառնիչ 120x400մմ | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 216 | Թի | Ձյան մաքրման համար,ամուր, որակյալ | հատ | 6 | Մինչև մայիսի 20 |
| 217 | Թի ձեռքի, անիվներով | Մաքրող հատվածը 90սմ երկ,20սմ բարձրություն,երգար պոչով, | հատ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 218 | Կաֆելի կտրիչ | Գլազուրային սալիկների կտրիչ(Набор корончатых сверл для плитки 4 ед., 33-73мм, вольфрамовое напыление) | կոմպլեկտ | 1 | Մինչև մայիսի 20 |
| 219 | Ալյուկոբոնդ | Մոխրագույն (серый),ամրացման համար անհրաժեշտ պռոֆիլներով և պտուտակներով | մ$^2$ | 20 | Մինչև մայիսի 20 |
| 220 | Կտրիչ ապակու | Ապակու կտրիչ,որակյալ,յուղով | հատ | 2 | Մինչև մայիսի 20 |

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| -------------------------------- | -------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 3

<< >> << >> 20 թ. կնքված

N __________________ *ծածկագրով գնման պայմանագրի*

_______________________________________________ ՋԵՌՈՒՔԲԵՐՄԱՆ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | ... % | ... % | ... % | ... % | 100 % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |

** Վճարումը կկատարվի ըստ մատակարարման, հաշիվ-ապրանքագրերի հիման վրա*

**ԳՆՈՐԴ** **ՎԱՃԱՌՈՂ**

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 4
<< >> << >> 20 թ. կնքված
N ___________________ *ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ
________________________________
________________________________
գտնվելու վայրը ________________
հհ ____________________________
________________________________
հվհհ __________________________

Պատվիրատու
________________________________
________________________________
գտնվելու վայրը ________________
հհ ____________________________
________________________________
հվհհ __________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________________ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

____________________________

ստորագրություն

____________________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

____________________________

ստորագրություն

____________________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1

<< >> << >> 20 թ. կնքված

N _______________ *ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

## պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ -----------------------------ի (այսուհետ՝ Գնորդ) և

(Գնորդի անունը)

--------------------------------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ------------

(Վաճառողի անունը)

գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ----------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով

Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

| Հանձնեց | Ընդունեց<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |

Հավելված 7

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

## ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների ճշտման մասին

.......................................................-ի կարիքների համար կազմակերպված ...............................................................

պատվիրատուի անվանումը — գնման ընթացակարգի ծածկագիրը

ծածկագրով կազմակերպման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20..... թվականի ....................-ի N ...... որոշմամբ 1-ին և 2-րդ տեղեր են զբաղեցրել ներքոհիշյալ մասնակիցները`

| N | Մասնակցի | | |
|---|---|---|---|
| | անվանումը | հարկ վճարողի հաշվառման համարը | հայտը ներկայացվելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը |
| | | | |
| | | | |

Խնդրում ենք ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 48-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրել եզրակացություն մասնակիցների` նույն կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների վերաբերյալ:

............................... ծածկագրով գնահատող

հանձնաժողովի քարտուղար .........................                ստորագրություն .......................

........... ................ 20.....

Հավելված 8

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի

47-րդ կետի 1-ին մասով նախատեսված հարցման մասին

| Գնման ընթացակարգի ծածկագիրը | Պատվիրատուի անվանումը | Մասնակցի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | անվանումը | հարկ վճարողի հաշվառման համարը | հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը/ՀՀ դրամ | հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը/ՀՀ դրամ | | | | հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը/ՀՀ դրամ | |
| | | | | | | | | | ակտիվներ | պարտավորություն |
| | | | | | 20..թ. | 20..թ. | 20..թ. | Ընդամենը | | |
| | | | | | | | | | | |

Եզրակացությունը տրվել է ................................. վարչության աշխատակից ................................-ի կողմից

.................................................................  ..............................................

պաշտոնյայի անունը, ազգանունը  ստորագրություն

Հավելված 10

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

# ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N <<---ՇՀԱՊՁԲ---/--->>

ք. Երևան <<_____>>____________20 թ.

<<Ընկերության անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Պատվիրատուի անվանումը>> (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<Գնման առարկայի անվանումը>> ձեռքբերման <<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով ---------- գնման ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի՝ Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը

Ընկերության հասցեն

Ընկերության բանկի անվանումը

Ընկերության Հ/Հ

Ընկերության ՀՎՀՀ

տնօրեն` -------------------------------

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ` ----------------------------

(ստորագրություն)

Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ **N**[29]

"______" ________ 20____ թ.

<table>
<tr><td>Վճարող`<br>ՀՎՀՀ -</td><td rowspan="3">ԴԵԲԵՏ<br><br>ԿՐԵԴԻՏ</td><td>ԳՈՒՄԱՐ<br>000,000.00</td></tr>
<tr><td>Վճարողի բանկը`</td><td rowspan="2">ԳՈՒՄԱՐ<br>(ԲԱՌԵՐՈՎ)</td></tr>
<tr><td>Շահառու`<br>ՀՎՀՀ -</td></tr>
<tr><td>Շահառուի բանկը`</td><td colspan="2">հշ.N</td></tr>
<tr><td colspan="3">Գումարը բառերով`</td></tr>
<tr><td colspan="3">Գնման գործընթացի ծածկագիրը</td></tr>
<tr><td colspan="3">Վճարման նպատակը<br>Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը<br>Կից_____էջ</td></tr>
</table>

<table>
<tr><td>Շահառուի ստորագրությունները<br><br>/_______________________/<br><br>/_______________________/<br>Կ.Տ.</td><td>Վճարողի ստորագրությունները<br><br>/_______________________/<br><br>/_______________________/<br>Կ.Տ.</td></tr>
<tr><td>Կատարված է շահառուի բանկի կողմից<br><br>/_______________________/<br><br><<___>>_______20___թ.<br>Կ.Տ.</td><td>Կատարված է վճարողի բանկի կողմից<br><br>/_______________________/<br><br><<___>>_______20___թ.<br>Կ.Տ</td></tr>
</table>

.......................................................................................................................................................................................................

[29] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

## Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը

| Դաշտի համար | <<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները | Նշված դաշտի/վավերապայմանի առկայությունը փաստաթղթում | Վավերապայմանի լրացման պահանջը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | վճարման պահանջագրի համարը | պարտադիր | պարտադիր |
| 2. | ներկայացման ամսաթիվը | պարտադիր | պարտադիր,<br>լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը |
| 3. | վճարող | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: |
| 4. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը | պարտադիր | պարտադիր |
| 5. | վճարողի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: |
| 6. | վճարողի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու |
| 7. | վճարողի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ |
| 8. | շահառու | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: |
| 9. | շահառուի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու |
| 10. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը | պարտադիր | պարտադիր |
| 11. | շահառուի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները: |
| 12. | գումարը (թվերով և բառերով) | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը |
| 13. | արժույթը (բառերով և/կամ կոդով) | պարտադիր | պարտադիր |
| 14. | գործարքի նպատակը | պարտադիր | պարտադիր |
| 15. | պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը |
| 16. | փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանները | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին, ինչպես նաև նշվում են |

| | | | |
|---|---|---|---|
| | | | վճարողին փաստաթղթերի տրամադրման պայմանները (տրամադրում՝ վճարի դիմաց, տրամադրում՝ ակցեպտի դիմաց, տրամադրում՝ երաշխիքի դիմաց և այլն): |
| 17. | առդիր էջերի քանակը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին: |
| 18. | վճարողի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր<br>այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: |
| | վճարողի կնիքը | պարտադիր | ոչ պարտադիր |
| 19. | շահառուի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր |
| | շահառուի կնիքը | պարտադիր | ոչ պարտադիր |
| 20. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր |
| | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | պարտադիր | չի լրացվում |
| 21. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում |
| | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում |
| 22. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության | պարտադիր | պարտադիր<br>այս դաշտը լրացվում է վճարողին սպասարկող ֆինանսական |

| | | | |
|---|---|---|---|
| | (մասնաճյուղի) կողմից ակցեպտավորված գումարը | | կազմակերպության (մասնաճյուղի) կողմից, որտեղ նշվում է այն գումարը, որը փաստացի գանձվել է վճարողի հաշվից, ինչպես նաև նշվում է արժույթը |
| 23. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից ակցեպտավորման ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | պարտադիր<br>վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի ակցեպտավորման ամսաթիվը, ժամը, րոպեն |

Հավելված 11

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

## ԵՐԱՇԽԻՔ N __________

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ________________________________
(անունը, ազգանունը կամ անվանումը)

(այսուհետ՝ բենեֆիցիար[30]) և _________________________ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև
(անունը, ազգանունը կամ անվանումը)

____________________ կնքված N _______________ պայմանագրից բխող պրինցիպալի
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (պայմանագրի համարը)

պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ______________________________(այսուհետ՝ երաշխիք տվող անձ)
(երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն կամ ապահովագրական կազմակերպություն)

անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել
_____________ (_____________) _________________________ (այսուհետ՝
(գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ)

երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո ______________ (________________)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի

______________________________ բանկում բացված ____________________________
(բանկի անվանումը) (բանկային հաշվի համարը)

բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է _________________ մինչև _______________ ներառյալ:
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

---

[30] *Պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:*

1) ____________________________________________________________

2) ____________________________________________________________

3) ____________________________________________________________:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը __________ (_______________)

(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ ________ չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն __________________________

Գլխավոր հաշվապահ ________________________

_________________________________

(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)